

ՈՒՈՒԹ ՈՒԻԹՄԵՆԻ ՊՈՅՏԻԿԱՆ

Ա. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երբ 1855 թ. Նյու Յորքում լույս տեսավ Ուոլթ Ուիթմենի բանաստեղծությունների ժողովածուն, «Խոտի տերևներ» վերնագրով, դժվար թե որևէ մեկը գուշակեր, որ դրանով նոր էջ էր բացվում ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային գրականության մեջ: Այժմ, հետնալեզվով, վստահորեն կարող ենք ասել՝ Ուիթմենը միակ ամերիկյան գրողն է, որն առայսօր շարունակում է պահպանել իր զարմանալի ուժը և ազդել ցանկացած լեզվով ստեղծագործող պոետների վրա՝ Ռաբինդրանադ Տագորից մինչև Ֆրենսիս Ժամ, Էմիլ Կեռաբուհից մինչև Մայակովսկի, Չարեհն և Պ. Սևակ: Ամերիկայում նրա միակ մրցակիցը երևի Մարկ Տվենն է՝ իր հանճարեղ «Հեկլբերի Ֆինոլ», բայց ազդեցությունների հարցում Ուիթմենը մնում է չգերազանցված: Ուիթմենը բացառիկ է նաև մեկ այլ առումով: Ժամանակակից արևմտյան քաղաքակրթությունը երևի միակն է պատմության մեջ, որի նշանավոր արվեստագետները ժխտում են հենց նրա կողմից ստեղծված համարյա բոլոր արժեքները, հակասական դիրք բռնելով կյանքի ու ստեղծագործության փոխհարաբերության հարցում: Այդ երևույթը մենք տեսնում ենք Բողլերի, Բլեյքի, Հյուդերլինի, Էլիոթի և Ալեն Գինզբերգի ստեղծագործություններում: Յուրաքանչյուր խոշոր գրող, սկսած այն պահից, երբ գլուխ բարձրացրեց մրցակցության և կեղծիքի մեջ թաղված հասարակությունը, այս կամ այն չափով օտար է եղել այդ հասարակությանը, և երևի միայն երկու հանճարներ են կարողացել հրաժարվել օտարացումից ու հոռետեսությունից՝ Տոլստոյն ու Ուիթմենը, բողլերյան աշխարհին լրիվ հակառակ ուղղությամբ ստեղծագործողները:

Ի տարբերություն իր ժամանակակիցների՝ Էմերսոնի և Մելվիլի, որոնք խիստ կապված էին իրենց տեղանքին, Ուիթմենի պոետական աչքը տեսնում էր ողջ Ամերիկան, նրա վիթխարի ստեղծարժեքը դեպի Արևմուտք, երբ Եվրոպայից ժամանող գաղթականները նոր լիքք էին տալիս անծայրածիր տափաստաններին ու բարձրացող քաղաքներին: Նա տոգորված էր իր ժամանակների շնչով, երբ Ամերիկան դեմոկրատական փոփոխությունների հույան ուներ, և շուտով պայթելու էր քաղաքացիական պատերազմը: Համարյա ամեն օր, մինչ իրեն պրոֆետիզմազ բանաստեղծ հռչակելը, Ուիթմենը՝ «Դեյլի Իզլ» թերթի խմբագիրը, դուրս էր գալիս իր հարմարավետ կաբինետից և շրջում Նյու Յորքի օրեցօր աճող թաղամասերով, հիանում Ծեքսպիրի բեմադրություններով և իտալական օպերայի հյուրախաղերով: Նա հիանում էր Բրոդվեյի քազմադեմ ամբոխով, և ինչպես ինքն է ասում՝ ուսումնասիրում էր «մասսաները»: Նրան հատկապես դուր էին գալիս պարզ, հասարակ, կենսասեր մարդիկ՝ բանվորներն ու ֆերմերները, և նրանց նա ավելի էր գնահատում, քան ինքնագոհ բարձր հասարակությանը: Ընկերոջը՝ Բաքին, ուղղված նամակում նա հայտարարում է. «Եվ հիշիր, որ «Խոտի տերևները» կյանքի է կոչել Բրուքլինում և Նյու Յորքում ապրած իմ գոյությունը, որն իր մեջ էր ներծծել այդ տասնհինգ տարիների ընթացքում միլիոնավոր մարդկային ճակատագրեր, որոնց ես զգացել եմ այնպիսի հարազատությամբ, այնպիսի կրքոտությամբ ու անկաշկանդ, ինչպես երբեք որևէ մեկը»: Հայտնագործելով և հաստատելով իր հարաբերությունը աշխարհի հետ, բանաստեղծը հայտնաբերում էր, որ այն, ինչը համարվում էր ոչ պոետական, նույնքան արժեքավոր է և վերապատկերմանի արժանի, որքան և պոետականը: Ժխտելով ռոմանտիկների հռչակած զուտ բանաստեղծական թեմաների կեղծ գաղափարը, նա իր բանաստեղծություններում կողք կողքի է դնում փայտահատի կյանքն ու իր հոգու ուղեորությունը, Լինկոլնի մահն ու միայնակ թռչնի երգը, մեռնողի հայացքն ու նորածնի ճիչը: Պատճառն այն էր, որ Ուիթմենի համար չկար որևէ ձևական ուժ, որ զսպեր և խեղդելով՝ կանոնավորեր նորից աշխարհը հայտնագործող բանաստեղծի էությունը, որն ընկալում էր, համեմատում, հրճվում, տառապում, միշտ բաց մնալով կյանքի անակնկալների առաջ: Եվ դա օգնում էր, որ ընթերցողը ստեղծագործաբար վերապրեր նրա խոսքը: Ինչպես Ուիթմենն է գրում «Հայացք՝ անցած ճանապարհի վրա» էստեում՝ «ըստ իմ ծրագրի, ես բանաստեղծություններս համարյա չեմ ավարտում

և չեմ էլ կարող ավարտել: Ընթերցողը միշտ էլ կուճեմա իր մասնակցությունը այդ հարցում, իմ իրավունքին հավասար»: Ամերիկյան գրողներից ոչ ոք այնպես չի գիտակցել իր ինքնատիպությունը, ինչպես Ուիթմենը. նա մի կողմ է թողնում ավանդական պոեզիայի ազդեցությունները, և կյանքի պրոզայիկ վիճակները հայտնվելով նրա քանաստեղծություններում՝ հանկարծ լուսարձակում են մինչև այդ չնկատված պոետական իմաստներ. հայտնվում է մտազործի աշակերտը՝ իր արյունոտ սպիտակ հագուստով, ավտոբուսի վարորդը, տոմսավաճառը, որ նշան է անում բուրդին տոմս գնել, մետաղադրամներով լիքը բռի զընգուն թափահարումներով, հողագործը, որ մաքրում է իր անդրավարտիքի փողքերը: Բանաստեղծություններից մեկում նա ուրվագծում է իր պոետիկան և նկարագրում պոեզիայի մուտքը Ամերիկա, բայց ինչպե՛ս. «Բոլորովին չվախենալով քամիչներից, գազամետրից և արհեստական պարարտանյութերից, ժպտալով և ուրախ՝ այստեղ մնալու իր ակնհայտ մտադրությամբ, Մուսան տեղավորվեց խոհանոցային ապրանքների կողքին»: Ուիթմենյան հումորի տակ թաքնված է մի ողջ պոետիկա, և ռեալիստական սենդի այս պահանջը Յիթսը նկատում է դեռ դարասկզբին. «Կան պոետներ, որոնք ծարավի են հասարակ և սովորական երևույթների»: Այս նույն երևույթը մենք տեսնում ենք Էդուարդ Թեյլորի գործերում և Ուիթմենի շնորհիվ այն արժեքավորվելով՝ գալիս-հասնում է 20-րդ դարի ամերիկյան պոեզիայի մի այլ նորարարին՝ Ուիլյամ Կառլոս Ուիլյամսին, և հատկապես նրա «Բրյուզելի պատկերներին», նաև՝ Ստիվենսի, Գինգբերգի, Ռյոքեթի լիրիկային: Ինչպես և սպասվում էր, «Խոտի տերևները» Ամերիկայում միանգամից դրական գնահատական չստացավ: Գիրքը քննադատվեց, գրողին մեղադրեցին գրական «մեղքերի» մեջ, և ինչպես Ուիթմենն է գրում՝ «Ես դժոխք էի սպասում և գիրքը տպելուց հետո այն անացա»: Անգլիական ռոմանտիզմի նրբակիրթ ավանդույթներով դաստիարակված որոշ ամերիկացի քննադատներ Ուիթմենին մեղադրում էին, որ նրա քանաստեղծությունները քարեհնչյուն չեն, և որ այդ գործերը անհնար է անգիր անել: Իսկ ոմանք էլ մեղադրում էին, որ նրա գործերը անհասկանալի են: Այդ քննադատները չէին հասկանում, որ մեծ և հրատապ թեմայի ու անելիքի դեպքում մի կողմ են մնում ամեն տեսակի գունազարդումներն ու համաչափությունները, և ինչպես Ուիթմենն է գրում իր նորարարության մասին՝ «հոգին և մարմինը հայտնվել են մեկտեղ, համարյա մերկ...»: Նրա քանաստեղծությունները հաղթանակների և ճգնաժամերի միջեր են, և այդ նորարարական վերելքում իր նպատակներին հասնելու համար Ուիթմենը անկասելի էր, իսկ դժվարին ընկալումը հետզհետե տեղի տվեց միասնուն ճանաչման: Բայց այդ ճանաչման համար պետք էրավ մի ամբողջ դար: Նման բախտի արժանացան նաև Ուիթմենի ժամանակակիցները: Բայց հանձինս Էմերսոնի, Հոբորնի, Տորոնտի և Մելվիլի, ամերիկյան գրականությունն ուներ այն քարձր մարդասիրական մթնոլորտը, որը և ինչ-որ չափով «ազատագրեց» և լսելի դարձրեց Ուիթմենի ձայնը: Ինչպես Ուիթմենն է ասում իր հայտնի խոստովանության մեջ, «Ես դանդաղ տաքանում էի, իսկ Էմերսոնը ինձ հասցրեց եռման կետին»: Փաստորեն ամերիկյան պոեզիան իր գավառական պատյանից դուրս է գալիս «Խոտի տերևների» տպագրությունից հետո: Նա առաջինն էր, որ ուշադրության կենտրոնում պահեց և պոեզիայի թեմա դարձրեց Ամերիկային ժամանակակից խնդիրները: Ուիթմենի իսկական ազդեցությունը մնան է դանդաղ կենտրոնացող և հզորացող գեոտի, որը մշտապես սնում էր իրարից տարբեր քանաստեղծների՝ Լաֆորգի, Էլիոթին, Ֆրոսթին, Փաուճին: Պոետն իր երկար կյանքի ընթացքում գտնում էր իրականության պատկերման նոր ձևեր և վերջապես մահվան մահճի մեջ կարող էր հայտարարել. «Եվ հպվում է գրքիս, հպվում է մարմնիս»: «Խոտի տերևների» առաջաքանում Ուիթմենը տալիս է նոր պոետի մուտքը Ամերիկա և գծում ամերիկյան պոեզիայի զարգացման հիմնական ուղիները. «Ահա այն կոշտությունը, անծայրածիր հեռաստանների տարածությունը, չարքաշությունը և ազատությունը, որոնց հոգին սիրում է և պաշտում: Բանաստեղծը մարմնավորում է երկրի աշխարհագրությունն ու ոգին և արհամարհում եվրոպականացած քնքույշ ինտելեկտները»: Ամերիկյան նոր պոետը ինքնավստահ է, ինչպես երբեք. նա այլևս գործ չունի Ծեքսպիրից մինչև Թեմնիսոն ձգվող ազնվականական ավանդների ու «հին տեսությունների ու ձևերի» հետ, փոխարենը առաջարկում է նոր ոճ և նոր աշխարհագրացողություն: Մեծ երգչի առաջնահերթ գրական և քաղաքական ծրագիրն է դառնում՝ «քաջալերել ստրուկներին և ահաբեկել բռնակալներին»: Այս ծրագիրը նա հերթական առաջաքաններից մեկում տեղադրում է իր ներք հայտնի ձևակերպումների մեջ. «Այն, ինչ բավարարում է հոգին՝ ճշմարտություն է, քեզ եմ երգում՝ պարզ, միայնակ մի անհատի, նաև արտասանում դեմոկրատիա քառը, մասսաներ քառը, և աշխարհի բնական ընթացքն ընդունող ու փառաբանող վերջին ձևակերպումը՝ ամենափոքրիկ թրթուրն անգամ իր ճիշտ տեղում է գտնվում, արևները, որոնց տեսնում եմ և արևները, որոնց չեմ տեսնում՝ իրենց ճիշտ տեղում են և ամեն ինչ ներդաշնակ է ու ճշմարիտ»: Ուիթմենը ամերիկյան գրականության մեջ առաջիններից էր, որ մի կողմ նետեց հին, պուրիտանական քարոյախոսությունը, ըստ որի՝ հոգին ավելի քարձր է, քան մարմինը: «Ընանապարհի մոտ» շարքում ինքը՝ քանաստեղծը, մարմնով ու հոգով

տառապողն ու հրճվողը, դուրս է գալիս մեծ ճանապարհ, արդար լույսին ու շնորհուրդված վիճակներին ընդառաջ: Բայց Ուիթմենը դեմոկրատական առաջխաղացման համար առաջ-նակարգ խնդիր է համարում ոչ միայն հոգու, այլև մարմնի ազդեցությունը: «Ամերիկա,— հայտարարում է նա,— ջո դեմոկրատիան ոչինչ է, եթե ազատություն չտաս նաև մարմնիդ»: Եվ ամեն ժամ ուրբանիզացող ու տեխնիկային հանձնվող ամերիկյան հասարակության համար մարմնի՝ այսինքն՝ բնական վիճակների և քննությանը հարցը դառնում է առաջ-նահերթ» և չի կորցրել իր հրատապությունն առայսօր: Ուիթմենը առաջինն էր, որ փշրեց հոգու համընթաց կեղծ հավատարմության շղթան և սովեց առաջնությունը մարմնին:

Անգամ Էմերսոնը չուներ այդ համարձակությունը, և անգամ Մեյվիլը չկարողացավ մինչև վերջ դուրս գալ պորիտանական կապանքներից: Ուիթմենը մոտեցրեց հոգին մարմնին, «բնակվի՛ր այստեղ,— ասաց նա,— բնակվիր մարմնի մեջ՝ սևամորթի, քանվորի և վիրավորի, և մնա ճահճուտ վայրերի խնկեղեգնի մեջ, ջո տեղն այստեղ է և ոչ թե երկրն-ջում: Հավասարապես տառապի՛ր մարմնի հետ, ճաշակիր նրա դառնություններն ու զըրկանքները և մի դասիր քեզ նրանից բարձր»: Բայց ինչպե՛ս պետք է դարձի քերվեր հոգին (այդ մեծ անորսալին) դեպի իրականություն: Ուիթմենը գտնում է հանճարեղ միջոց, և դա ոչ թե խորհրդածությունն է, ոչ թե ծուր պահելը կամ ցնորքն ու էքստազը, այլ պարզապես բաց ճանապարհի վրա հայտնվելը, միայն բաց ճանապարհով «ճանապարհորդելը» և աշխարհը բաց ճանապարհի համակարգում տեսնելը: Պատրաստ եղիր ամեն տեսակի հանդիպումների, ասում է նա հոգուն ու մարմնին իր «Ճանապարհի մոտ» հոյակապ շարքում:

Եվ եթե Հեմինգուեյը ասում էր, որ ամերիկյան նոր արձակը ծնվել է Մարկ Տվենի «Հեկլբերի Ֆիննից», ապա չափազանցում չի լինի, եթե ասենք, որ ամերիկյան պոեզիայի ժամանակակից ընթացքը ծնվել է Ուիթմենի «Խոտի տերևներ»-ից և հատկապես, նորից նշենք, «Ճանապարհի մոտ» բանաստեղծական շարքից.

**Գ՜ո՛ւ, ճանապարհ, քայլում եմ ջո վրա և նայում շուրջս,
Բայց բավականություն չեմ զգում:
Ինձ թվում է, ջո մեջ շատ բան կա թաքցված,
որ անհնար է տեսնել այքերով:
Ահա այստեղ է խրատը ծնվում—
ընդունել ամեն ինչ, ոչինչ չմերժել,
ոչ մեկին առավելություն չտալ,
ճանապարհը բաց է բոլորի առաջ՝
Գանգրահեր նեզրի, հանցագործի, հիվանդի,
Մեղաբերության՝ ինչ-որ մեկը վազում է բժշկի հետևից,
Աղքատը կաղում է, հարբեցողը՝ ճոճվում,
անցնում են խմբով բանվորները և քրքջում,
Ճանապարհը բաց է
Տճից փախած դեռահասի, հարուստի կառքի, պճնամոլի, փեսացուի առաջ,
որ թաքուն փախցնում է հարսին հարազատներից,
Վաճառականի առաջ, որ վաղ առավոտյան շտապում է շուկա,
Գիակառքի՝ որ հեռանում է քաղաքից,
Կահույքի, որ տեղափոխում են քաղաք, իսկ մյուսը՝ քաղաքից տանում,
Նրանք անցնում են, ես էլ եմ անցնում, և բոլորն են անցնում,
և ոչ մեկը մյուսին չի ժխտում,
Եվ ես էլ ոչ մեկին չեմ մերժի՝
բռն՝րմ էլ հարազատ են ինձ:**

Ճանապարհը դառնում է կյանքի սիմվոլը, և Ուիթմենը կարող էր լրջորեն, քայց հեզ-նական քողի տակ հայտարարել իր գրական մանիֆեստը.

«Գիրքս՝ պարզ, քաջ, քնքույշ, խորհրդածող, զգայական ու իշխող մի մարդու փորձն է՝ գրականություն քերել ոչ միայն սեփական տոկոմությունն ու ինքնավստահությունը, այլև արյունն ու մարմինը, և չճայելով անցյալի օրինակների վրա, մոռանալով հոմերոսներին ու օրենքները, ոչինչ չճանաչել, բացի անչափ սիրելի իր հայրենի հողից և պատկերել այն: Եվ այն, ինչ հաջողվում է նրան, ոչ թե արվեստի արհեստական նվաճում է, այլ ստեղծագործ աչքի ծնունդ, և ծնվում է մաքուր ձեռքերից, ստեղծագործ մթնոլորտից, ծառերից, թռչուններից:

Խոտի տերևները փորձում են խոսել ըստ էության անհատի մասին, իմ մասին, որ ապրում է Ամերիկայում 18-րդ դարի երկրորդ կեսին, խոսել ողջ ձայնով, լրիվ և ճշմարտացիորեն»: Այդ բնորոշումը ճշմարիտ է և այսօր, և ճշմարիտ են հնչում մանիֆեստն ապացուցող այս տողերը.

Ես իճձ եմ փառաբանում և գովերգում եմ իճձ,
քանի որ ամեն մի հյույն, որ իճձ է պատկանում,
պատկանում է և ձեզ,

Ես՝ ազատ մի թափառաշրջիկ, կանչում եմ հոգուս,
Ընդունում բնությունը այնպես, ինչպես նա կա,
Ես թույլ եմ տալիս նրան թուր ժամերին,
Խոսել նախնական ուժով ու պատկերներով:

Ուիթմենը «Խոսի տերևներում» փորձում է բացահայտել նոր ժամանակների մարդու էությունը:

Այս առումով անչափ կարևոր է գրքի «Երգ իմ մասին» շարքը, որը կազմված է 52 բաժիններից: 1—5 բաժիններում բանաստեղծը մտնում է կեցության և գոյության հրաշքի մեջ, որը նա աստվածացնում է բոլոր միջոցներով: 17—32 բաժիններում նա «մաքրագործում է» հենց իրեն, ընդունելով մարդու անկումն ու արտաները, և հաշտեցնում հակադրությունները: 33—37 բաժիններում նա վերապրում է խորհրդապաշտ իրողություններ, 38—49-ում նա խորհրդածում է մահվան և անմահության իմաստների շուրջ, փառաբանում մարդկության կողմից ստեղծված բոլոր իմաստասիրությունները, դառնում մարդու վշտերի կրողն ու միաժամանակ ամիգրողը, 50—52-ում բանաստեղծը հրաժեշտ է տալիս ընթերցողին: Ծարքի վերջում նա անհայտանում է «օդում և հողում»: Կարևոր և հիշարժան բաժիններից է նաև 5-րդը, որի թեման է՝ եղբայրություն համայն արարչագործության և մարդկության հետ, 6-ում նա բացահայտում է խոսի խորհրդանշական իմաստը, 11-ում՝ մեղության և մահվան թեմաներ են, 33-ում՝ ժամանակի մեջ ճանապարհորդելու սկիզբն է խորհրդածում, 35—38-ում՝ քաղաքացիական պատերազմի օրերին նավատորմի դակտատամարտի նկարագրությունն է: Կարևոր գործերից է «հրուկլիմի գետնապի վրա» բանաստեղծությունը, որտեղ բանաստեղծը վարպետորեն վեհացնում, փառաբանում և աստվածացնում է մարդու ամեհօրյա կենսափորձը: «Անվերջ օրորվող օրորոցից դուրս» պոեմում նա պատմում է, թե ինչպես է Ուիթմենը դարձել բանաստեղծ: Բանաստեղծությունից նա սպասում է հատուկ մի ուղեքն, իսկ ցավերգակից նա սովորում է սիրո ցավի իմաստը: Ծովից սովորում է մահվան իմաստն ու նրա հարաբերությունը կյանքի հանդեպ: Ծովը նաև մայր է, որն անվերջ օրորում է օրորոցը: «ՆԱնկեղեզն» շարքը սիրո և եղբայրության հարցերն է քննում: «Երբ անցյալ գաբուն, տան առաջ, բակում, ծաղկել էր եղևնին» էլեգիա է, նվիրված նախարար Լիկլոյնի հիշատակին:

«Խոսի տերևների» պոետիկան համապատասխանում էր Ուիթմենյան դարաշրջանի ոգուն և այդ նույն շրջանի ծնունդն էր: Գիրքը ձևավորվեց մի ժամանակ, երբ երկրում տեղի էին ունենում հզոր պատմական տեղաշարժեր: Ստրուկների ազատագրման շարժումը իր լուծումը գտավ միայն քաղաքացիական պատերազմից հետո, որը և ձևափոխեց հասարակությունը: Նման պայմաններում հնացած ողմանտիկական միջոցներն ու ձևերը անկարող էին այդ տեղաշարժերի պոետական վերապատկերումը տալ, և Ուիթմենի նոր խոսքը նման էր գեղարվեստական հեղափոխության, երբ հին ձևերը չէին համապատասխանում երկրի և մարդու նոր չափումներին, և հարկավոր էր արմատական փոփոխություններ: Բայց ամենամեծ նորարարությունն այն էր, որ բանաստեղծը կարողացավ արտահայտել հասարակ ամերիկացու՝ ժողովրդի ներաշխարհն ու ձգտումները, և վերլիբը հզոր գործիք էր այդ նպատակների համար, որովհետև բանաստեղծի խոսքը ուղղված էր ոչ թե ընտրյալներին, այլ միլիոնավոր ընթերցողներին, և սա էլ նախապայմանը դարձավ այն փաստի, որ 20-րդ դարն իր հոգևոր հայրերի շարքում տեսավ նաև Ուիթմենին: Միաժամանակ երևույթների և կյանքի լայն ընդգրկումը Ուիթմենի մոտ պայմանավորված է անհատական կյանքի խորը վերապատկերումով: Ահա այստեղ է, որ նորից առկա է հայտնագործությունը: Ուիթմենը գտնում էր, որ անհատը զգայական ընկալումների մի ողջ համաստեղություն է և անվերջ փոփոխվող ու հոսող ժամանակի մի մասնիկը, նա բարձր է կանգնած ամենօրյա ճիշտ հոգներից, և ինչպես Ուիթմենն է ասում, «բարձր է ամեն տեսակի սենսացիաներից» և արժանի է ամենամեծ ուշադրության:

Բանաստեղծը սիրո և նրան ուղեկցող մեծ զգացմունքի շնորհիվ ըմբռնում է հավերժական մի ճշմարտություն՝ «բոլոր մարդիկ եղբայրներ են և դա նույնքան ճշմարիտ է, որքան «Խոսի տերևների անը»: Ուիթմենի պոեզիան կրկնում է նորից ու նորից՝ կյանքն ու մահը զարմանալի ընթացքի մի մասն են, որտեղ յուրաքանչյուր երևույթ հավասարապես կարևոր է:

Ես տեսնում եմ հրաշք մի զարմանք,
որ գլորվում է օդի մեջ,
եթե դու նայես երկնքին.
Եթե դու սիրես բույրին,—

գրում է նա իր քանաստեղծություններից մեկում՝ փառաբանելով գոյությունը, և մինևույն ժամանակ ասում՝ դադարեցնենք պատերազմներն ու ատելությունը, նախանձն ու ստորությունը, նայենք կյանքի անկրկնելի ընթացքին, նրա բազմապիսի դրսևորումներին, ներկա լինենք այդպես և ոչ թե բռնությամբ ու ստորությամբ: Բանաստեղծը հանդես է գալիս թե կնոջ և թե տղամարդու անունից, մարմնավորվում է չարիքի և բարու հակադրություններում, ընդունում մարդկության պատմական ընթացքը և հավատում նրան:

**Ես ասում եմ նշանաբանս, ես նշում եմ անում՝
դեմոկրատիա,
երդվո՛ւմ եմ, չե՛մ ընդունի ոչինչ,
եթե անհնար է այն կիսել մյուսների հետ:**

Բանաստեղծի ներշնչման աղբյուր են դառնում ստրուկների խուլ և ողբերգական ձայները, հիվանդների հեծեծանքը և մարդու ցանկության ու հրճվանքի ճիչերը:

«Լիտտի տերևներում» լիրիկական հերոսը մերթ Բրողվելի ամբոխի մեջ թափառող քաղաքացին է, մերթ ազատ որսորդը կամ էլ հետապնդվող ստրուկը և նորից զգայական կենսափորձը, աշխարհը զգալու հրաշքը նրա համար առաջնահերթ է:

**Հեռավոր դաշտերում, հեռավոր լեռներում,
թափառում եմ մենակ, սեփական ճարակությանս
ու հրճվանքիս վրա զարմացած,
երեկոյան, փնտրում եմ ապահով մի վայր գիշերելու համար:**

Բանաստեղծին կարող էր եսասիրությունից ազատել միայն ազատ կյանքի ներխուժումը, քայց այդ հրճվանքի մեջ նա կարողանում էր տեսնել նաև կյանքի հակառակ կողմը՝ մահն ու անէությունը: Ուիթմեն-լավատեսի համար դա նույնպես առաջընթաց է, զարգացման բնական ձևերից մեկը, և զարմանալիորեն այդ թեմայի կողքին հայտնվում է նաև Ամերիկայի պրոբլեմը, ու այնտեղ տաճող ուղին նա ձեռք է բերում ոչ թե բնագրով կամ էլ թեթև խորհրդածությամբ, այլ ինչպես ինքն է ասում՝ «ձեռք եմ բերում տանջալի ցավով»: Այս ցավը ծնվում է հիասթափությունից, որովհետև տեսնում էր, որ ամերիկյան հայտնի երազանքը՝ հասարակ մարդկանց, գաղթականների համընդհանուր և ազատ հայրենիք ունենալու երազանքը, ոչ մի կապ չունի դաժան իրականության հետ: Այս հիասթափությունը ավելի լավ է արտահայտված բանաստեղծի տողերում:

**Ամռան տաք քամին փչում էր անվերջ, բայց ցուրտ էի
զգում մարմնիս մեջ՝**

**Այն տարի, երբ ամեն ինչ ցնցվեց, և հողը տակնուվրա եղավ,
Արևի լույսի մեջ մի ստվեր երևաց, և ես ծածկվեցի խավարով:
Դե ի՞նչ, չերգեմ այլևս երգեր ցնծության,
թե երգեմ միայն թաղման ծեսերում,
նրանց համար, ովքեր պարտվեցին,
թե ներքոզ գրեմ ընկածների համար:**

Այդ շրջանում նա գրում է «Դեմոկրատական հեռաստաններ» արձակ գործը, որը ըստեղծվեց մի ժամանակ, երբ արդեն ավարտվել էր քաղաքացիական պատերազմը և սկսվել էր մի նոր՝ օլիգարխիաների և մոնոպոլիաների կողմից իշխանությունը գրավելու պատերազմը: Գրողի կարծիքով, դեմոկրատիան այնտեղ է, որտեղ հնարավորություն է տրվում անհատին լրիվ բացահայտել իր ուժերը, երբ մարմինը, հոգին և միտքը բարձր նպատակներ ունեն, և այդ նպատակները իրագործելի են: Դեմոկրատիայի հիվանդության նկարագիրը նրա համար ռեալիստական է, և չմոռանալ, որ մինչև գիրք հրատարակելը, նա պրոֆեսիոնալ քաղաքագետ էր: Եվ ինչքան խորանում ենք գրքի առաջին հայացքից քառասային թվացող կառուցվածքի մեջ, այնքան ավելի է զծագրվում նորի զգացողությունը, և այն ինքնավստահ ու ուժեղ մարդը, որն իրեն «հզոր Ուիթմեն» է անվանում, ետանդուն դարի խորհրդանիշ, «ակնթարթային ներշնչանքից» մինչև մարդկության ապագայի մասին մտածող քարի քաղաքացի: «Դեմոկրատական հեռաստաններ» վերնագիրը խոսում է այն մասին, որ Ուիթմենը երես է թեքել իր ժամանակներից և ազատություն է որոնում ապագայի հեռաստաններում:

**Բողոքն այստեղ եմ, ներկա եմ ինձ մոտ,
Երանելի հորիզոններն ու հեռաստաններն աղոտ:**

Նման լայն ընդգրկման տեղ մարդասերը, որը հավատում էր ազգերի հաղթական շքերթին, հուսահատվում էր, երբ տեսնում էր դեմոկրատական իդեալների անկումը Ամե-

րիկայում: Դեռ մինչև քաղաքացիական պատերազմը՝ նա արդեն կասկածում էր ամերիկյան իրականության ճիշտ ընթացքի վրա, բայց աշխատելով հոսպիտալներում, տեսնելով զինվորների քաջությունը, նա հավատով լցվեց: Դժբախտաբար, պատերազմի ավարտից հետո կաշառակերությունն ու ծախվածությունը մեծ չափերի են հասնում, և Ուիթմենը նման դեպքերում անողոր էր: «Դեմոկրատական հեռաստաններ» գրքում նա դաժանորեն մերկացնում է Ամերիկայի քողարկված արատները և անարգանքի սյունին գամում ճրա անկումը:

Թ՛, հեղձուցիչ օրեր, օ՛ երկիր,

ամեն տեսակի հասարակական և անձնական եղծման, լեռնցած գողության, անզորության և անամոթության մեջ խեղդված երկիր:

«Մտորումներ» բանաստեղծության մեջ Ուիթմենը ուղղակի անվանում է քոլոր **ճրամեց**, ովքեր նպաստում են հասարակության և անհատի ստորացմանը:

**Մտորումներ՝ հասարակական կարծիքի մասին,
Օրենքի, վաղ թե ուշ, վստահ և անխուսափելի հաստատման մասին՝
(այնքան անկողմնապահ, հզոր և անպայման)
Մտորումներ՝ գունատված պրեզիդենտի մասին,
քո թաքուն հարցնում է ինքն իրեն—
Իսկ ի՞նչ կասի այդ մասին ժողովուրդը,
Մտորումներ՝ ցինիկ դատավորների
և կոնգրեսի ծախու անդամների մասին,
նահանգապետների և քաղաքագլուխների մասին, ահա ճրամեց՝
շփոթված կանգնած են անարգանքի սյունին ճոռ:**

Ասքանից հետո մի քայլ է մնում Ուիթմենին հայտարարելու. «Ես հրաժարվում եմ լինել ծախու քաղաքագետների և կապիտալիստների շարքերում, ես ծայրում եմ անդրա-վարտիքիս փողքերը և դուրս գալիս փողոց՝ վարորդների և նավաստիների հետ թափա-նելու»:

Բայց այս չարիքի կողքին կար մեկ ուրիշը՝ պատերազմը, որի հետևանքները նա տեսել էր երկու տարի անընդմեջ, երբ աշխատում էր հոսպիտալում որպես բուժակ: Անցել էին տարիներ, բայց նա դեռ լսում էր «հրանոթների համազարկի խուլ արձագանքը, և ծանր դոփյունը հեծելագորի»: Իր «Թմրկահարվածներ» ընդարձակ բանաստեղծական շարքում, որը նա մտադիր էր առանձին գրքով հրատարակել, Ուիթմենը վերաֆիշում է.

**Կանանց հեծեծանքներն ու հառաչը վիրավորների,
բոցերի ֆշողն ու ճարճատուները փլվող տների,
քաղաքների մոխիրը, մահերգն ու ավերումը ճարդկության:**

Ի տարբերություն Մելվիլի, որը պատերազմին չէր մասնակցել և որն իր «Վակատա-մարտի երգերում» այն պատկերում է էպիկական շնչով, որպես հերոսական արարքների մի թատերաբեմ, Ուիթմենն ընդհակառակը՝ հեռանում էր էպոսի շունդալի պատկերներից և գերմարդու ու հերոսի փոխարեն պատկերում հասարակ մարդկանց տատապանքներն ու ապրումները:

Բայց վերադառնա՞նք «Երգ իմ մասին» շարքին և հատկապես վերջին բանաստեղծու-թյուններին, որտեղ որքան էլ հզոր է բանաստեղծի ձայնը և լավատեսական, հայտնվում է էլեգիկ մի երանգ, որը սակայն ոչ թե կարտոսի և ցավի հեկեկանք է, այլ նորից կյանքի հաստատման ու ուժի դրսևորում: 19-րդ դարի ո՞ր բանաստեղծի մոտ մենք կարող ենք գտնել կյանքի և մահվան զգացողության այսքան ճշգրիտ զգացողություն և այսքան ան-նկատ իրար լրացնող ու ձուլվող պոետական անցումների մի ամբողջ շարք, որտեղ պոետը հրաժարվում է մեղորոշմանի դիմակով նայել երևույթներին, և կյանքի խորհուրդը հայտնվում է ահա այս խորիմաստ բանաստեղծական տողերում:

**Սլանում է առաջ խայտարղետ բազեն և հանդիմանում,
որ ես շատախոս եմ և հապաղում եմ ամեն ինչում:
Բայց ես ճրա նման անորսալի եմ և վայրի:
Ես իմ բարբարոս ճիչն եմ արձակում աշխարհի տամիքների վրա,
Հանո՛ւն ինձ, մի պահ հապաղում է օդում վերջին հողմածափը,
Նա նետում է պատկերս՝ մյուսների հետ միասին,
նույնքան իրական, որքան նրանցից լուրաքանչյուրը,
դաշտերի վրա հեռու-հեռավոր,
նա գայթակղում է ինձ դառնալ մայրամուտ և գայթա՞րի,**

**Ես հեռանում եմ ինչպես օդ, և սպիտակ խոպոպներս
փայլվում են փախչող արևի հետևից:
Քող հոսի մարմինս ալիք առ ալիք, հագած կոհակը ջրերի,
ես կտակում եմ ինձ այս ցեխոտ հողին:**

Այս բանաստեղծության մեջ յուրաքանչյուր մասնիկ ճիշտ տեղում է, յուրաքանչյուր թվարկում իր իմաստն ունի: Մեծն ու փոքրը, կարևորն ու երկրորդականը հավասար են այդ շրջապտույտում: Բլեյքի, Ուիլսոնի, Դիկկինսոնի, Ռոյթքեյի շնորհիվ գեղեցիկի պահը երևում է ոչ միայն մեծության, ահռելիության մեջ, այլև վայրկենականի ու հյուլեի մեջ.

**Ես երգում եմ իմ երգը հպարտության,
ես ցույց եմ տալիս, որ իսկական չափը
արտաքին և ներքին ալիքների ներդաշնակումն է հաճատեղ:**

Եվ կարող ենք ասել, որ Ուիլսոնը բնականացրեց վեժնն ու վերացականը և այն բնականացրեց մարմնի և հոգու մեջ, տվեց նրան մարդկային գծագիր: Նյութական աշխարհի այս փառաքանումը իր շարունակությունը գտավ Փաունդի, Լոուրենսի, Քրեյնի և Գինգրեթի ստեղծագործություններում: Եվ եթե Անգլիայի ռոմանտիկներ Բլեյքի ու Քիթսի համար վեժն կերպարները միշտ արտաբնական են գոյատևում, ապա Ուիլսոնի մոտ դրանք ներքնորեն են զարգանում, և ինչպես նա է գրում՝ «Հողը զգում է մարմնիս շնորհիվ, իսկ մարմնիս՝ հողի»:

Իր ժամանակի կատարյալ զգացողությունը նրան հնարավորություն է տալիս ճիշտ ընտրություն կատարել բանաստեղծական ձևի և տաղաչափության հարցերում: Մի կողմ դնելով հանգը և նախընտրություն տալով ազատ բանաստեղծության արտահայտչական ձևերին, որտեղ իմաստը միշտ կապվում է ներքին դրամատիկվի հետ, Ուիլսոնը կարճում էր իր և ընթերցողի միջև ընկած ճանապարհը: Այդ նույն երևույթը տեսնում ենք Օեքսպիրի մոտ: Նրա սոնետները ցույց են տալիս, թե ինչպիսի անգերազանցելի վարպետ էր նա հանգի օգտագործման հարցում, բայց չգիտես ինչու կանոնավոր և դասական տաղաչափության ձևերին նա հրաժեշտ է տալիս, և նրա համար ողբերգությունները, չնայած չափածո են, բայց միշտ էլ կանգնած են արձակի և պոեզիայի սահմաններում, և ուշ շրջանի գործերում ազատ չափերի շնորհիվ նրա ձայնը բնական է և դրամատիկ: Պատճառը երևի այն էր, որ ժամանակը նրան ներկայացրել էր նոր պահանջներ, և նա չհրաժարվեց դրանցից: Այդ նույն պահանջը ստիպեց Ուիլսոնին հրաժարվել կոկիկ և մաշված տողերից, հանգի կեղծ բանաստեղծական պաճուճանքներից, ընդարձակել գրված բանաստեղծության հորիզոնը՝ լրիվ օգտագործելով խոսակցական լեզվի հնարավորությունները:

Բանաստեղծը գուշակում էր իր հանճարեղ գրքի ապագա հաղթարշավը և «Նոտների տերևների իմաստը» բանաստեղծության մեջ գրում.

**Այս երգի բառերը, խոսքերն ու թռիչքը բարձր են և հպարտ,
Նա ընդգրկում է տարածության և ժամանակի անեզր տարրերը,
Ես երգեցի երգս դեռ փոքրուց և տարա մինչև խոր ծերություն,
Քափառեցի, զննեցի, չընդունեցի և ոչ մի հեղինակություն,
Երգիս մեջ դրի լույս և սավեր,
Չնահանջեցի մի քաղ անգամ՝ երբեք,
Եվ վերջացնում եմ այն այստեղ և այժմ:**

А. М. АРУТЮНЯН—Поэтика Уолта Уитмена.— В статье рассматриваются некоторые проблемы поэтики американского поэта 19 века Уолта Уитмена, а также новаторство поэтических тем в сборнике «Листья травы» (1855). Особо исследуется важнейшая часть сборника—«Песнь о себе», где впервые в американской поэзии сведено до минимума разграничение тем, а жизненный опыт поэта в самых разнообразных проявлениях с помощью верлибра воплощается в совершенно новых по ощущению и построению стихах. Верлибр для Уитмена—не только «техническое» новшество, но в первую очередь своеобразное проявление его мироощущения. Великий Уитмен создает новые формы и новые темы, воплотив свою оригинальную поэтику в живую ткань своих стихов.